«Արշակունոյն եւ հայկազնոյն», երրորդ տողի մէջ «ծառային» ընդգծուածները· տողերի վերջում կտրըուած են ««բարեպաշտին», «եկեղեցիքս», վերջին տողի մէջ «եղից·»:

Ուշադրութեան արժանի է տեղի անուան «Կեչառուաց» ձեւը, որ միակն է վիմական եւ մատենագրական գրականութեան մէջ:

Շահխ· 194: Ալիշան· Այր· 260: Սմբատեան· Գեղարք· 349: Լալ· Հանդ· Ազգ· XXIII. 127: Կոստ· Վիմ· Տար· 23:

Առաջին տող Շահխ·, Ալիշան եւ Կոստանեան թուականը կարդում են «հինգհարիւրերորդի»: Ալիշան եւ Կոստ· թագաւորութեան: Սմբատեան, Մոնոմախին:

Երկրորդ տող· Ալիշ· Գրիգորին: Սմբ· մագիստրոսին կետաւնդին: Շահխ· Սմբ· եւ Կոստ· «տուկին»: Շահխ· Սմբ· հուշակաւոր:

Երրորդ եւ չորրորդ տող· բոլորն էլ «ծառային»· «կեչառուաց»: «ուր»: Շահխ· Ալիշ· Կոստ· մագիստրոս· Սմբ· մագիստրոս: Բոլորն էլ «ամենայն»· առանց ուշադրութեան առնելու գրչի սխալը: Բոլորն էլ «արասցեն» առանց որ եւ է նկատողութեան: Բացառութեամբ Լալ·–ի, բոլորն էլ «Հասանայ»: Սմբ· «մագիստրոսին»: Ալիշ· եւ Լալ· հաստատոյ: Ալիշ· Սմբ· Լալ· «ջանայ»:

Հինգերորդ· բացառութեամբ Լալ·–ի բոլորն էլ· «քահանայից» կամ «քահանայիցն»: Բոլորն էլ «Յուդայի», «շնորհիւն»:

Վեցերորդ· բոլորն էլ «եպիսկոպոսիս»· բացառութեամբ Լալ·–ի «հաւր»: Ալիշ· Սմբ· եւ Լալ· «Գրիգորոյ»:

Լալայեան տողերի վերջին բառերը, որ ինքը ընդգծել է, գրուած է համարում արեւելեան պատին, որ պարզ թիւրիմացութիւն է, հետեւելով Ալիշանին:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 39·

### Բ· Գրքի եր· 11· պատկ· 125·

### ԿԵՉԱՌԻՍ

Լուսաւորչի հարաւային պատին, տողերի առաջին բառերը ծածկուած ժամատան պատի տակ:

1· ... ան թուականութեանս Հայոց ի հայրապետութեան տն Գրիգորիսի եւ ի թագաւորութեանն Վրաց Գաւրգէ եւ մերոյ իշխան

2· ... ն ես հայր Պետրոս եւ եղբայր իմ տր Յուսէփ եւ Սարգիս կր աւ ն աւ որ եւ միաբ ան ուխտս հաստատեցաք տն Ստեփ ան ոսի Աղու ան ից կաթուղիկոսի ի տ ար ին

3· ...զ՞ս ի տաւնի առաքելոցն Դաւթի, Պետրոսի: Յոհաննու ամ էն եկեղեցիքս էթէ ոք խափ ան է: յժը: իցն նզովեալ եղիցի:

Իբրեւ շարունակութիւն·

Ես Սիմեւոն քահանա գնեցի·

4· ... յեկեղեցիս որ առնեն ինձ տ ար ին: բ: աւր ժամ որ խափանէ ղատի յայ:

Իբրեւ շարունակութիւն·

5· ... Ես խաչաւուր եւ միաբան եղբ ար քս վերստին ն որ ոգեցաք զեկեղեցիս եւ սահմանեցաք զտ աւ ն սրբո խաչին որ ամ են այն եկեղեցիքս ժամ Գիշուկին առն են մի ջն որ (դ)ուժր ամ իր Բուբաին

6· ...ԺԸ իցն:

---

ԾԱՆՕԹ·— Շահխ· Բ· 193, առանց նշանակելու բոլոր տողերի սկզբի ժամատան պատի տակ ծածկուած մասերը: Զունի եւ Խաչաւուրի արձանագրութիւնը: Ալիշան· Այր· 261· եւ Սմբատեան Գեղարք· 351· առանց Խաչաւուրի արձանագրութեան: Լալ· Ազգ· Հանդ· XXIII. 127/8:

Հինգերորդ տողի մէջ փակագծում առնուած «դ» մոռացուած է փորագրել: «Ամիր» բառի մէջ կցուածքով «ամի», ապա «իր»:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 40·

### Բ· Գրքի եր· 7, 12, 22

### ԿԵՉԱՌԻՍ

Ս· Նշանի հիւսիսային պատին·

1· Ի ՈԺԲ: Կամաւ բարերարի

2· ն Այ ես Վարդըմբել որ գնե

3· ցի ի յԵրեւան զՄեղխտնոյ էգոյն չ

4· արէքն եւ ետու ի սբ Գրիգորս սպասաւորք ս

5· որայ աւանդեցին տարին: բ: ժամ որ խափանէ իմ մեղաց

6· ս տէր և առաջի Այ ամէն:

---

Շահխ· Բ· 196· թուականը նշանակում է ՈԾԳ, որ սխալ է: Ալիշան· Այր· 262: Կոստ· Վիմ· Տար· 46: Մեսր· Արքեպս· Սմբատեան· Գեղարքունի· 353: Լալ· Ազգ· Հանդ· XXIII. 130: Բոլորն էլ թուականը դնում են Շահխ·ի նման, ուրիշ սխալներ էլ իրարից արտագրելով, ինչպէս· 2–3 «որ գնեցի», ամենքն ունին «որ նորոգեցի»: